

Հայաստան - Սփյուռ 5-րդ համագումար և Հայ լրագրողների 7-րդ համաժողով
Նյու Յորքի "Սփյուռքի Ձայնը" հեռուստահանդեսի տնօրենուհի Կարինե Քոչարյանի ելույթը:

Հարգելի բարեկամներ խոսքս ուզում եմ սկսել, ողջունելով Հայաստան - Սփյուռք 5-րդ համագումարի և մասնավորապես Հայ լրագրողների 7-րդ համաժողովի մասնակից իմ գործընկեր լրագրողներին՝ ժամանած աշխարհի տարբեր երկրներից և նաև նշել, որ ինձ համար պատիվ է մասնակից լինել այս պատմական նշանակություն ունեցող համաժողովին, Հայոց մեծ եղբունի 100 ամյա տարելիցի նախաշեմին:

Այս օրերի ընթացքում բազմաթիվ ելույթներ հնչեցին Հայոց հրատապ խնդիրների վերաբերյալ: Իմ գործընկերները անդրադարձան հատկապես լրատվամիջոցների կարևորությունը, որպես քաղաքացիական հզորագույն զենք, որպես պայքարի, հակահարվածների լայն հարթակ, որպես մեր երկիրը աշխարհին ներկայացնելու լավագույն միջոց: Խոսքի, գրչի ու ժը ամենահզորն է աշխարհում և մեծագույն պատասխանատվություն է ընկնում այն օգտագործողների՝ լրագրողների վրա: Բանիմացություն, անաչառության և մյուս կարևոր հատկանիշների կողքին, իմ կարծիքով, լրագրողների համար շատ կարևոր է պահպանել Հայոց լեզվի անաղարտությունը, լինի թերթ, րադիո կամ հեռուստատեսություն, և ես իմ այսօրվա ելույթի նյութը ընտրել եմ մեր մայրենի լեզվի պահպանման խնդիրը, ելնելով այն աղավաղումներից, որ հատկապես վերջին տարիներին, ահագնացող չափերի է հասնում հայաստանյան լրագրողական աշխարհում:

Հայոց լեզուն իր բազմադարյա պատմության մեջ միշտ էլ ենթարկվել է օտար ազդեցությունների, ընդունելի կամ անընդունելի պատճառներով: Նախ որ Հայաստանը եղել է մեծ երկրների տիրապետության տակ, բառեր փոխառել հարևան երկրների լեզվից (գուցե նաև տվել), ընկել տարբեր ժամանակաշրջանների նորաձևության ազդեցության տակ, օգտագործելով օտար բառեր, որոնք կամաց կամաց մտել են ժողովրդի առօրյա խոսակցության մեջ ու մնացել:

Սովետ միության տարիներին հատկապես, հակայական էր ռուսաց լեզվի ազդեցությունը: Ռուսական դպրոցների շրջանավարտների խոսքը ակամայից կես հայերեն կես ռուսերեն էր հնչում, բայց ի տարբերություն ժողովրդի առօրյա խոսակցության, այդ ժամանակվա հայկական թերթերը կամ հեռուստաթերթերը ավելի մաքուր էր, քան այսօր, երբ մեքս անկախ ինքնիշխան երկիր ենք, երբ Հայոց լեզուն իշխող լեզու է մեր կրթօջախներում և մեր ձեռքին է Հայոց հնադարյան լեզուն անարատ պահելը, առավել ևս մաքրելը, նախապես արմատացած, օտար ազդեցություններից:

Ցավոք մենք ամբողջովին հակառակն ենք անում: Այսօր Հայաստանյան լրատվամիջոցները, հեռուստաթերթերը ողողված են անգլերեն բառերով, և ծիծաղելին այն է, (իհարկե կլինեն ծիծաղելի , եթե չլինեն այդքան ողբալի), որ այդ անգլերեն բառերը վերծված են ոչ թե անգլերենից, այլ ռուսերենից: Ռուսները կապում են անգլերեն բառերը իրենց սխալ արտասանությամբ, սխալ հնչողությամբ, քանի որ չունեն այնքան տառեր, որպեսզի օրինակ Հ տառի փոխարեն Խ, կամ Բ-ի փոխարեն Ռ չարտասանեն: և այնպես է ստացվել, որ իրենց արտասանած "անգլերեն" բառերը որևէ անգլախոս չի հասկանում: Հայաստանն էլ, ինչպես գրեթե ամեն ինչում, այստեղ էլ կապկուռ է Ռուսաստանին և այդ, այսպես կոչված, անգլերեն բառերը հնչում են ամենուր, տեղ են գրավում քաղաքի ցուցանակներում, որոնք, ի դեպ, պարզ ժողովրդի 90%-ին հասկանալի չեն, օգտագործվում են ինչ որ մի խավի խոսակցության մեջ, (որպես նորաձևություն) և որ ամենահավոր է ողողում են լրագրերն ու եթերը: Այս է, իմ կարծիքով, ամենացավալին և այս հարցի վրա է, որ ուզում եմ գրավել ձեր ուշադրությունը:

Բերեմ օրինակներ.

1. Անգլերեն *Glamour* - նշանակում է *հմայք*, արտասանվում է *գլեմըր*- ռուսական արտասանությամբ *գլամուռնի*, դարձել հայերեն լեզվի վերջին հիշը
2. Անգլերեն *creative*- նշանակում է *ստեղծագործական*, արտասանվում է *քրիեյտըվ* - ռուսական արտասանությամբ *կրիածիճի*, նույն ձևով մտել է հայկական եթեր
3. Անգլերեն *ex*- նշանակում է *նախկին*, բայց չգիտես ինչու այդ պարզ բառը գերադասվում է անգլերենով ասել, (երևի հայերենով հնաոհ է հնչում)
4. Անգլերեն *tour*- նշանակում է *շրջագայություն*, արտասանվում է *թուր*, հայերենով դարձել է *տուր*
5. Անգլերեն *nonsense* նշանակում է *անհեթեթություն*, արտասանվում է *նանեսնա*: Երևի հայերեն տարբերակը դժվար է արտասանել, իսկ անգլերենը սխալ էլ ասես կանցնի
6. Անգլերեն *shopping* նշանակում է *գնումներ* արտասանվում է *շապինգ*: Երևի հայերենով գնումներ անելը նորաձևությունից դուրս է ալլես.
7. Անգլերեն *gender* նշանակում է *սեռային* արտասանվում է *ջենդըր*, հայերենով դարձել է *գենդերային*
8. Անգլերեն *consensus* նշանակում է *համաձայնություն*, արտասանվում է կրնեսնաըս, հայերենով դարձել է *կոնսենսուս*
9. Անգլերեն *ombudsman* նշանակում է Մարդու իրավունքների պաշտպան, ամբողջամեն, հայերենով ամբուսմեն

Այս անհասկանալի բառերը շատ են և գնալով ավելանում են, գուցե մեր լեզուն "հարստանում" է՞, ուղակի որոշ մարդիկ չեն հասկանում, բայց բանն այն է, որ ես փորձի համար, այս բառերի նշանակությունը, ռուսա-հայկական հնչողությամբ, հարցրեցի իմ ամերիկացի բարեկամներին, պատասխանը միանշանակ էր. "այդպիսի բառեր անգլերենում չկան": Գուցե որոշ մարդկանց անհեթեթ կարծիքով մեր լեզուն հարստանում է, բայց ես գտնում եմ, որ հայերեն լեզուն կեղտոտվում է, չեմ վախենում այս կոպիտ խոսքից, այդ կեղտոտվում է, այնպես ինչպես մաքուր, ծյան պես եերմակի վրա սև տիղմ, կեղտ նետես և ինչու՞, ինչ է այդ՞, նորաձևություն, տգիտություն, օտարամոլություն...:

Այս բառերի սիրահար մարդկանցից միայն մեկ հարցի պատասխան կուզենալի ստանալ, ԻՆՉ է ՆՇԱՆԿՈՒՄ ԻՐԵՆԾ ՀԱՄԱՐ ՀԱՅՐԵՆԱՍՏԻԹՅՈՒՆԸ: Ամպագործող հառե՞ր, ինքնագովություն, թե՞ նախանձախնդրություն ազգային արժեքների հանդեպ, մեր հարուստ, անիրկների լեզվի հանդեպ: Այսօր ժամանակն է, որ մարքերը մեր լեզուն, ցավոք արդեն կարծրացած, օտար բառերից, այլ ոչ թե, ինքներս մեզ երևակայելով, ավելացնենք ոչինչ չնշանակող նոր բառակույտ.

Ես չեմ ժխտում, այն փաստը, որ լեզուն առաջընթաց է ապրում, որ ժամանակի հետ ստեղծվում են նոր իրեր, նոր երևույթներ, որոնք բերում են իրենց միջազգային անունները, դրանք հատուկ անունների նման մի բան են: Ես որոշ դեպքերում նույնիսկ դեմ եմ դրանց թարգմանությունը: Օրինակ, երբ ստեղծվեց Computer-ը, հայերենով թարգմանվեց համակարգիչ, թեև այդ մեքենան համակարգողից շատ ավելի բազմաբնույթ է և անունն ու էությունը այնքան էլ չեն համապատասխանում:

Ինչևիցե, ես պարզապես կարծում եմ, որ այդպիսի բառեր թարգմանելու փոխարեն ավելի կարևոր է պահպանել հայերեն պարզ բառերը, և մասնավոր՝ եթերից շատել ես OK եմ, կամ Shopping-ի էր գնացել, կամ գենդերային անհավասարություն և ալլես և ալլես.

Ամեն մի վատ երևույթ հաստատվում և սովորական է դառնում անտարբերության շնորհիվ: Այսօր իհարկե մեր երկիրը շատ խնդիրներ ունի լուծելու և իմ առաջ քաշած նյութը գուցե այնքան էլ առաջնակարգ ու հրատապ չթվա, բայց իմ կարծիքով Հայ ժողովրդի ամենամեծ արժեքներից մեկը իր հնադարյան հարուստ լեզուն է, իր գրավոր ու բանավոր խոսքը և դրա պահպանումը նույնքան կարևոր է, որքան մեր հայրենի երկրի սահմաններն ու խաղաղ երկինքը.

